



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeoghiche.org.uk](mailto:info@styeoghiche.org.uk)  
[www.styeoghiche.org.uk](http://www.styeoghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

28th November 2021

Bulletin 49/2021

### First Sunday of Advent

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-10

Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսով:

Հնորիք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծոյ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոս: Ամէն  
ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծոյ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն  
մէջ, անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը,  
եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝  
Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ  
Աստուած ընտրեց ձեզ: Որովհետեւ մեր անտարանք  
քարոզուեցաւ ձեզի ոչ միայն խօսքով, այլ նաեւ գործութեամբ,  
Սուրբ Հոգիով ու լման վատահոյութեամբ: Դ՛ուք ալ գիտէք թէ  
ինչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, եւ դուք նմանեցաք մեզի ու  
Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին  
ուրախութեամբ: Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր  
հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ  
են, որովհետեւ ոչ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ  
հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ  
տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ  
պէտք չունինք որեւէ բան խօսելու. քանի որ իրենք իրենցմէ կը  
պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՜ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ  
ինչպէս դուք կուրքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ  
Աստուծոյ ծառայելու համար, եւ երկինքէն սպասելու անոր  
Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ  
կ'ազատէ մեզ զայիք բարկութենէն:



Paul's Letter to Thessalonians

#### The Epistle of St Paul to the 1 Thessalonians 1:1-10

Paul, Silas <sup>a</sup> and Timothy,

To the church of the Thessalonians in God the Father and the Lord Jesus Christ:

Grace and peace to you.

#### Thanksgiving for the Thessalonians' Faith

We always thank God for all of you and continually mention you in our prayers. We remember before our God and Father your work produced by faith, your labour prompted by love, and your endurance inspired by hope in our Lord Jesus Christ.

For we know, brothers and sisters <sup>b</sup> loved by God, that he has chosen you, because our gospel came to you not simply with words but also with power, with the Holy Spirit and deep conviction. You know how we lived among you for your sake. You became imitators of us and of the Lord, for you welcomed the message in the midst of severe suffering with the joy given by the Holy Spirit. And so you became a

#### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

## 2: A short interpretation of the Scripture reading

model to all the believers in Macedonia and Achaia. The Lord's message rang out from you not only in Macedonia and Achaia—your faith in God has become known everywhere. Therefore we do not need to say anything about it, for they themselves report what kind of reception you gave us. They tell how you turned to God from idols to serve the living and true God, and to wait for his Son from heaven, whom he raised from the dead—Jesus, who rescues us from the coming wrath.

### ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12:13-31

Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապետ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՛վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ զգուշացէ՛ք ազահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ ըսաւ. “Մա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ ասելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»»: Բայց Աստուած ըսաւ անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ”: Այսպէս է ան՝ որ զանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:



Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. որովհետեւ անձը կերակուրէն ասելի է, ու մարմինը՝ հագուստէն: Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ ասելի կ'արժէք թռչուններէն: Ձեզմէ ո՛վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը ասելցնել հասակին վրայ: Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՛նչպէս կ'անձին: Ո՛չ կ'աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ ասելի ձե՛զ, թերահաւատներ: Ա՛լ դուք մի՛ փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»»:

### The Holy Gospel of Jesus Christ according to Luke 12:13-31

for the Holy Spirit will teach you at that time what you should say.”

#### The Parable of the Rich Fool

Someone in the crowd said to him, “Teacher, tell my brother to divide the inheritance with me.”

Jesus replied, “Man, who appointed me a judge or an arbiter between you?” Then he said to them, “Watch out! Be on your guard against all kinds of greed; life does not consist in an abundance of possessions.”

And he told them this parable: “The ground of a certain rich man yielded an abundant harvest. He thought to himself, ‘What shall I do? I have no place to store my crops.’”

“Then he said, ‘This is what I’ll do. I will tear down my barns and build bigger ones, and there I will store my surplus grain. And I’ll say to myself, “You have plenty of grain laid up for many years. Take life easy; eat, drink and be merry.”’

“But God said to him, ‘You fool! This very night your life will be demanded from you. Then who will get what you have prepared for yourself?’

“This is how it will be with whoever stores up things for themselves but is not rich toward God.”

### **Do Not Worry**

Then Jesus said to his disciples: “Therefore I tell you, do not worry about your life, what you will eat; or about your body, what you will wear. For life is more than food, and the body more than clothes. Consider the ravens: They do not sow or reap, they have no storeroom or barn; yet God feeds them. And how much more valuable you are than birds! Who of you by worrying can add a single hour to your life? Since you cannot do this very little thing, why do you worry about the rest?

“Consider how the wild flowers grow. They do not labour or spin. Yet I tell you, not even Solomon in all his splendor was dressed like one of these. If that is how God clothes the grass of the field, which is here today, and tomorrow is thrown into the fire, how much more will he clothe you—you of little faith! And do not set your heart on what you will eat or drink; do not worry about it. For the pagan world runs after all such things, and your Father knows that you need them. But seek his kingdom, and these things will be given to you as well.

## **Ս. Գրիգոր և Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետների և Մյուռոն եպիսկոպոսի հիշատակության օր**

Ս. Գրիգոր Սքանչելագործը ծնվել է Պոնտոսի (Մեքաստիա) Նեոկեսարիա քաղաքում ազնվականի ընտանիքում, շուրջ 210 թվականին: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրենսգիտության և հռետորության մեջ, սակայն Աստված նրա և իր եղբոր համար այլ ճանապարհ էր նախասահմանել. նրանք ուսանում են Աթենքում, ապա Պաղեստինյան Կեսարիայում՝ աշակերտելով այն ժամանակվա ամենահեղինակավոր քրիստոնյա մտավորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ նա ձեռնադրվում է քաղաքի եպիսկոպոս: Ավանդության համաձայն՝ Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվելու օրերին Նեոկեսարիայում հագիվ 17 քրիստոնյա կար, իսկ մահվան օրերին՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անվան հետ կապված բազմաթիվ հրաշքների համար արժանացել է «Սքանչելագործ» մակդիրին: Ս. Գրիգորն աչալրջությամբ կառավարեց թե իրեն վստահված թեմն ու ժողովրդին, թե եղավ մեծ մատենագիր՝ թողնելով բազմաթիվ աստվածաբանական երկեր:

Նա վախճանվել է 270 թվականին խաղաղ մահվամբ:

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքում (ներկայիս Անթալիայի մոտակայքում): Փոքր հասակից կորցնում է մեծահարուստ և բարեպաշտ ծնողներին և մեծանում իր քեռու՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքի ներքո: Ավետարանական պատգամը՝ <<Վաճառիր ունեցվածքդ և բաժանիր աղքատներին>> (հմմտ. Մտթ. ԺԹ 21), իր կյանքի նշանաբանն է դարձնում՝ խնամելով աղքատներին, հիվանդներին, բանտարկյալներին և որբերին: Ժողովրդի կամքով դառնում է Չմյուռնիայի եպիսկոպոսը: Հալածանքների ընթացքում արքայադուռ է, սակայն չի դադարում ամենուր Ավետարանը քարոզելուց: Խաղաղություն վերահաստատվելուն պես վերադառնում է իր աթոռը, մասնակցում 325 թվականին Նիկիո Տիեզերաժողովին: Մահացել է 326 թվականին: Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է՝ առավելաբար հայտնի Սանտա Կլաուս անվամբ:

Ս. Մյուռոն եպիսկոպոսը ծնվել է մոտ 350 թվականին: Նա մեծ հրաշագործ էր՝ հայտնի իր ողորմությամբ և բարեգործությամբ: Քրիստոնյաների հալածանքների ժամանակ, երբ Ս. Մյուռոնը Կրետեի եպիսկոպոսն էր, քաջալերում և խրախուսում է բոլորին՝ ինքը ևս անհամբեր սպասելով նահատակության պսակն ստանալուն: Սակայն Աստծո կամքով հասնում է մինչև խոր ծերություն՝ 100 տարեկանում ավարտելով իր բարեպաշտ կյանքը:

## **Commemoration of Sts. Gregory the Thaumaturge, Pontiff Nikoghayos and Bishop Muron**

St. Gregory the Thaumaturge (Wonderworker) was born in the town Neocaesaria of Pontos (Sebastia), in the family of a nobleman, in about 210 AD. Gregory was going to study jurisprudence and rhetoric, but another way was predetermined by God for him and his brother. . Gregory and his brother receive education in Athens and then in Palestinian Caesaria. Their teacher was Vorogines who was one of the most prominent Christian scientists of that time. Returning to Neocaesaria, he is ordained as the Bishop of the town. According to the tradition during the period of Gregory’s ordination there were hardly 17

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**



heathens. He has deserved the epithet “Thaumaturge” for the numerous miracles relating to his name and reputation. St. Gregory is also the author of many theological works. He passed away in 270 AD.

Pontiff Nikoghayos (Nicholas the Bishop) was born in the town Batara (presently nearby Antalia), in the province of Likia, in Asia Minor. His rich and pious parents pass away when he was a baby, and he is brought up and educated by his Uncle Bishop Nikoghayos Yerets. The evangelical commandment: “...sell all you have and give the money to the poor...” (The Gospel according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the sick, the prisoners and the orphans. By the will of the people he becomes the Bishop of Smyrna. During the period of Christians’ persecutions he is exiled, but however, continues to preach the Gospel everywhere. After the establishment of peace, he returns to his residence and participates in the Ecumenical Council of Nicaea in 325 AD. He has passed away in 326 AD. He is one of the most beloved saints of the Universal Church and is more famous by the name Santa Claus.

Bishop Muron (Myron) was born in about 350 AD. He was a great wonder-worker and was familiar for his mercy and charity. During the period of Christians’ persecutions, When St. Muron was the Bishop of Crete, he impatiently waiting for his martyrdom, supports and encourages everybody, By the will of God he lives up to old age and passes away at the age of 100.



## Diocese of the Armenian Church of the United Kingdom and Ireland

# Christmas Carols

### At Guildford Armenian Mission Parish

With the participation of the **Klingen Choir**

Artistic director and conductor: **Sipan Olah**

Piano: **Maria Palazian**

Soprano: **Hayarpi Yeghikyan**

**Saturday 11 December 2021 at 18.00**

*Mince pies, Armenian Christmas cakes, mulled wine/soft drinks will be served at the interval.*

*Donations of £5 are welcome!*

Armenian Church Trust UK Account:

Acc No: 205 73 160

Sort Code: 30 – 94-65 Reference: *Guildford*

There will also be a box at the church for cash donations.

There will be a bus from London departing from the Bishop’s House at 16:00. **Tickets £15.** Please register to avoid disappointment on the day.

For more info please contact [info@armenianchurch.org.uk](mailto:info@armenianchurch.org.uk) or [irma.nasip@yahoo.com](mailto:irma.nasip@yahoo.com)





## Join St. Yeghiche Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nardirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: [services@styeghiche.org.uk](mailto:services@styeghiche.org.uk)



## Serve the church and your community as a deacon, sub-deacon or acolyte

Join us in the celebration of the Divine Liturgy (Badarak) in the Armenian churches in the UK and become an altar server. Deepen your faith and discover your talents by learning the deacons' duties and singing the Armenian hymns.

No prior experience or knowledge is needed. The clergy will help you build your confidence and proficiency in singing and chanting.

Deacons and altar servers join the Primate and clergy during visits to mission parishes across the United Kingdom.

We look forward to welcoming everyone to serve as Deacons. Your presence will expand and enrich our altar. For further details, please contact: [services@styeghiche.org.uk](mailto:services@styeghiche.org.uk)

## St Yeghiche Armenian Church Christmas Tree

We will be erecting our Christmas tree and Nativity scene this Sunday 28th November 2021 after church service. We invite all the children in our community with their parents to join us and our Deacons to decorate our 2021 Christmas Tree. Please bring wrapped empty boxes of any size to fill under the Christmas tree.

**Thank you.**

## Տոնաձառի ծագումը

Մեր օրերում Սր. Ծննդյան տոնի և Ամանորի անբաժան խորհրդանիշն է տոնական զարդարված տոնաձառը, որը սակայն երկար ճանապարհ է անցել՝ մինչև մեզ հասնելը:

Գերմանիային է վերագրվում Սր. Ծննդյան Տոնի ծառի զարդարման ավանդույթի սկիզբը 16-րդ դարում, երբ հավատավոր քրիստոնյաները զարդարված ծառերը բերեցին իրենց տները:

Ոմանք տոնաձառը պատրաստում էին փայտից և զարդարում մշտադալար բույսերով և մոմերով:

Աստիճանաբար տոնաձառի ավանդույթը տարածվեց Եվրոպայի տարբեր երկրներում: Անգլիայի Վիկտորիա թագուհու ամուսինը՝ իշխան Ալբերտը տոնաձառն ավելի նորաձև դարձրեց՝ 1841թ. անգլիական առաջին տոնաձառը Ուինձորի դղյակում զարդարելով մոմերով, զանազան կոնֆետներով, մրգերով և մեղրաբլիթով:

Իհարկե, շուտով անգլիացի այլ հարուստներ հետևեցին նրա օրինակին՝ զարդարելու նպատակով օգտագործելով զանազան խենթոխենյա իրեր: Չարլզ Դիկենսը նկարագրել է տոնաձառ՝ զարդարված տիկնիկներով, խաղալիք փոքրիկ կահույքով, երաժշտական գործիքներով, հրացաններով և թերթով, մրգով և քաղցրավենիքով:

19-րդ դարի առաջին տասնամյակներում տոնաձառերն ընդունված չէին: Տոնաձառի առաջին ցուցադրությունը 1830-ական թվականներին կատարեցին Փենսիլվանիայի գերմանացի նորաբնակները: Նրանք ցուցադրեցին մի տոնաձառ՝ տեղի եկեղեցու համար գումար հանգանակելու նպատակով: 1851թ. եկեղեցիներից մեկի բակում տոնաձառ դրվեց, սակայն ծխականներն այն համարեցին վերադարձ հեթանոսությանը և եկեղեցու սպասավորին խնդրեցին տոնաձառը հանել:

Մինչև 1980-ական թվականները տոնաձառի զարդարանքները գալիս էին Գերմանիայից, իսկ ԱՄՆ-ում տոնաձառը գնալով ավելի ու ավելի մասսայական էր դառնում: Եվրոպացիներն օգտագործում էին փոքր տոնաձառեր՝ մոտավորապես 4 ֆուտ բարձրությամբ, մինչդեռ ամերիկացիները գերադասում էին հատակից մինչև առաստաղ հասնող տոնաձառերը: 20-րդ դարի սկզբում ամերիկացիներն իրենց տոնաձառերը զարդարում էին հիմնականում տնայնագործ զարդարանքներով, իսկ գերմանական ծագումով ամերիկացիները շարունակում էին օգտագործել խնձոր, ընկուզեղեն և նշակարկանդակ:

Շարաններ էին պատրաստվում մեջընդմեջ դրված վառ գույներով ներկված եգիպտացորենի բոված հատիկներից (ադիբուդի), հատապտուղներից և ընկուզեղենից:

Էլեկտրականությունը նպաստեց, որ լույսերով զարդարված տոնաձառերը զարդարվեն աշխույժ գույներով: Դրանից հետո տոնաձառերը սկսեցին հայտնվել քաղաքային հրապարակներում: Թե մասնավոր և թե հանրային բոլոր կարևոր շենքերը տոնաձառի զարդարումով ազդարարում էին Սր. Ծննդյան Տոնի սկիզբը:

Վաղ տոնաձառերը զարդարվում էին փերիների և բարի հոգիների պատկերներով, թեն եղջյուրները և զանգակներն էլ օգտագործվում էին չար ուժերին վախեցնելու համար: Լեհաստանում տոնաձառերը զարդարվում էին հրեշտակներով, սիրամարգերով և այլ թռչուններով, ինչպես նաև շատ աստղերով, Շվեդիայում՝ վառ գույներով ներկված փայտե խաղալիքներով և կենդանիների ու երեխաների ծոցոտե պատկերներով:

Դանիայում տոնաձառների վրա կախում էին դանիական փոքրիկ դրոշակներ, զանգակներ, աստղեր, ձյան փաթիլներ և սրտիկներ: Ճապոնիայում քրիստոնյաները նախընտրում էին փոքրիկ հովիարներ և թղթե լապտերիկներ: Լիտվայում տոնաձառերը զարդարում էին ծոցոտե թռչնավանդակներով, աստղերով և երկրաչափական պատկերներով: Ծոցոտե խորհրդանշում էր նոր տարում առատ բերքի մաղթանք: Չեխոսլովակիայում տոնաձառերը զարդարում էին ներկված ձվի կճեպից պատրաստված զարդարանքներով:





### 3: This week's message from our Priest in Charge

#### **Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն  
«Այն ամէնը, ինչ սուրբ է, պահեցէ՛ք սրբութեամբ,  
եւ դուք պիտի սրբանաք. նրանք, ովքեր սովորեն այդ բաները, պաշտպանութիւն պիտի գտնեն» (Իմաստ. 6:11):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Մեր հոգեւոր եւ ազգային կեանքում շատ դժուար եւ պատասխանատու օրեր ենք ապրում: Ոչ միայն համայնական, այլեւ անձնային խնդիրների, ճգնաժամների դէպքում շատերն են յաճախ Աստծոյ հետ մտքում կամ բարձրաձայն կոչի տալիս՝ ինչո՞ւ, ինչպէ՞ս պատահեց, ինչի՞ համար: Դաղիվանքի, Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու եւ Արցախի միւս եկեղեցիների մասին հարցումներ շատ եղան, թէ ինչո՞ւ Աստուած թող տուեց Իր տաճարների գերուելը: Չէ՞ որ ամէն օր աղօթքով եւ աղերսանքներով Տիրոջ առաջ էինք բերում մեզ եւ մեր երկիրը...

Նոյն հարցն էին տալիս խրալեացիները, երբ պարտուելուց յետոյ մտածեցին Աստծոյ Ուխտի Տապանակը բերել բանակ, որ Տիրոջ օգնութեամբ կարողանան յաղթել, բայց այս անգամ առաւել մեծ պարտութիւն կրեցին՝ արդիւնքում գերի թողնելով Տապանակը: Ուխտի Տապանակի գերուելուց առաջ եթէ նայենք հոգեւոր վիճակը, Հեղի քահանան աչք էր փակում իր երկու զաւակների անօրէն ընթացքի վրայ, երբ նրանք պղծութիւններ էին գործում իրեն սպասաւորութեան մէջ՝ անարգելով նաեւ ուխտաւոր կանանց եւ այլոց: Երբ նայում ենք այդ օրերի նկարագրութիւնը, ասում է, որ «Այդ օրերին Տիրոջ խօսքը հագուագիւղ էր, եւ տեսիլք չկար, որ գուշակուէր», որոշ հատուածներում աւելացւում է. «եւ մեկնելու արժանի տեսիլքներ չէին երեւում» (Ա. Թագ. 3:2): Տէրը տեսիլքով մանուկ Սամուէլի միջոցով զգուշացրեց, որ Աստծոյ ժողովրդին առաջնորդող եւ դատաւորութիւն անող Հեղի քահանայի որդիների կատարած անօրէնութիւններ համար մինչեւ վերջ պիտի վրէժ լուծի նրա սերնդից, որովհետեւ իր որդիները Աստծուն էին անարգում, իսկ նա նրանց չէր յանդիմանում:

Այս պատճառով շարունակւում էին անօրէնութիւններն ու պղծութիւնները, որոնց արդիւնքը եղան անօրէն պաշտօնեաների սպանուելը եւ իրենց պահպանած սրբութեան գերեվարումը:

Այսօր գերուած են մեր սրբութիւնները՝ վանքեր ու եկեղեցիներ, վանքերի պէս սրբացած մեր Հայրենիքի հատվածները: Մենք էլ խոկալու, ինքնաքննելու, մեր կյանքն ու գործերը վերանայելու լուրջ հրաւեր ունենք այս պատերազմի արդիւնքում: Արժէքների մեր ծառը ներսից բարոյական անկման որդն է տարիներ շարունակ կրծում: Քրիստոսի քննադատութեան ճիպտորդ արտաքինից լաւ ու գեղեցիկ, մաքուր ու բարեպաշտ, ազնիւ եւ հայրենասէր թուացողների նկատմամբ էր: Այդպիսիներին Տէրը յամենատուում է սպիտակեցրած գերեզմանների, որոնք ներսից լի են աղտոտութեամբ:

Առանց սուրբ Աստծոյ, մարդու արժէքն էլ է ընկնում: Մեր սրբութիւնները արժէք են տալիս, բարձրացնում են մեզ, սրբութիւն փոխանցում մեզ, երբ մենք երկւղած ու պատկառանքով պահում ենք իրենց արժէքը եւ խնամք տանում: Ինչպէս Հաղորդութիւն կռուող հայ զինուորն էր սահմանում. "Մենք պահում էինք Աստծոյ սուրբ եկեղեցիները, Աստուած էլ մեզ էր պահում":

Արեւմտեան Հայաստանի ուխտի գնացած մի հայ քահանայ տխուր եզրակացրեց, որ Աստուած մեզդեռ չի արժանացնում մեր սրբութիւնների վերադարձին, քանի դեռ բուն Հայաստանում մենք որոշ տեղերում մեր սրբավայրերը աղբով լեցուն ու անխնամ ենք պահել, երբեմն կենդանիների զով տեղի համար գործածել, թողել, որ անգամ ծառեր աճեն տանիքներին եւ փլուզու վտանգ ստեղծեն: Այսօրուայ մեր սերունդի դէպքում էլ քանի դեռ եկեղեցի եկողների մէջ առաւել սիրալիր ենք զբոսաշրջիկների նկատմամբ, քան հայ հաւատացեալների, երբ սրբութեան տաճարները Աստծոյ փառաբանութեան եւ սուրբ խորհուրդներ կատարելու փոխարէն պղծում ենք ցուցահանդէսներով եւ համերգներով, կարող ենք կրկին կորցնել, սրբութիւնների նոր գերութեան վկայ լինել, ինչպէս պղծութիւն հանդուրժող խրալեացիները պարտուեցին եւ տեսան Ուխտի Տապանակի գերուելը: Դրա շարունակութիւնը մեր մարմնի տաճարների պղծումն է լինում, մեր մեծ տաճարի՝ Հայրենիքի եւ սրբազան արժէքների անկումը:

Ամենամեծ սրբութիւնն էլ երբ մերը լինի ու չգնահատենք, կարող ենք կորցնել, այնինչ հիմայ ինքներս մեզ քննելու, քննադատելու, հոգեւոր բառով՝ ապաշխարելու եւ ինքնամաքրուելու, Աստծուց մեզ տրուած սրբությունների վերաբժեղորելու եւ կեանքի գնով պահպանելու հրաւերն ունենք: Արիւն թափելու աստիճան մեղքին դէմ կանգնելու առաքելական խօսքը մեզ սրա կոչն է մատուցում. մենք մեր մարմին տաճարից մինչեւ Աստծոյ Տուն եղող մեր եկեղեցիները եւ մեծ իմաստով՝ տաճարացած մեր Հայրենիքը պահպանելու համար պատրաստ պիտի լինենք անգամ արիւն թափելու աստիճանին:

Դրա համար նախ մաքրենք մեր միտքը, մարմինն ու կենցաղը Աստծուն վանող պղծութիւններից, քանի որ մենք՝ մարդիկ ենք մեր սրբությունների պաշտպանողները կամ անարգողները: Աստուած է պատուիրում. "Սուրբ եղէք, քանզի Ես՝ ձեր Տէր Աստուած, սուրբ եմ" (Դեւտ. 19:2), ինչը երկրորդում է առաքեալը:

Սրբութեան պահպանենք մեր սրբությունների, քանի մինչ Տիրոջից երկնային բան ստանալը այստեղ իսկ դրա դիմաց կունենանք մեր ջանքի, երկիւղի, սրբութեան համար պայքարի վարձը՝ պահպանութիւնը մեր Փրկիչ Աստծոյ, ինչպէս Ս.Գիրքն է վկայում. "Նրանք, ովքեր սովորեն այդ բաները, պաշտպանութիւն պիտի գտնեն" (Իմ. 6:11):

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

#### 4: Հոգեհալսոյն - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Alice and Aram Mardirosian, Armand, Aline, and Tamar Abramian for the soul of their Brother and Uncle the late **ASHOT ABRAMIAN** (1949-2021) on the 40<sup>th</sup> day memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MARDIROSIAN** and **ABRAMIAN** Families.

By Viken, Anush and Razmig Bayramian and their Families for the soul of their Mother and Grandmother the late **EMIK MAGAR BAYRAMIAN** on the 40th day memorial of her passing, also for all the old and new deceased members of the Bayramian Family.

By Lucin and Raffi Odabashian, Natalie Odabashian-Gulian and Family for the soul of their Mother, Grandmother and Great-grandmother the late **DIKRANOUHI NISHANIAN**, also for their closest Friend **N. G. RANSLEY**, also for all the old and new deceased members of **NISHANIAN**, **ODABASHIAN**, and **RANSLEY** Families.

By Zvart and Garo Stepanian and Family for the soul of their parents and Grandparents the late **ISHKHAN** and **FILOR AZOIAN**, **JOSEPH** and **ELBIS STEPANIAN**, also for their Uncle and Aunt the late **GEORGE** and **NEVART KHLOYAN**, also for all the old and new deceased members of the **AZOIAN**, **STEPANIAN** and **KHLOYAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

**HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS:** Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers. Your kind donations are gratefully accepted:**

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcome your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **"St Yeghiche Armenian Church"**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

